## ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՈՒՐՍ

Ուսման նպատակն է բազային գյուղատնտեսական կրթության հիման վրա կիրառական ագրարային մենեջմենթի մասնագետների (Master of Business Administration) կրթելը, ով իր գործնական և տեսական գիտելիքներով կարող է ինքնուրույն և մեծ պատասխանատվությամբ բազմաթիվ առաջադրանքներ կատարել և գյուղատնտեսական ձեռնարկությունների խորհրդատվություն իրականացնել:

## ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

- Գործունեություն գյուղատնտեսական ձեռնարկություններում
- Արդյունաբերական ոլորտում, հատկապես միջազգային ձեռնարկություններում և արտասահմանյան մասնաճյուղերում
- Գիտամանկավարժական գործունեություն համալսարաններում և քոլեջներում
- Գործունեություն գյուղատնտեսության կառավարման, խորհրդատվական և ծառայությունների մատուցման բնագավառում
- Համագործակցություն միջազգային ծրագրերում
- Առաջադրանքներ կիրառական գիտահետազոտական հաստատություններում

## ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ


**Հայաստանի Պետական**

**Ագրարային Համալսարան**

**Տերյան 74,**

**0009 Երևան**

**II մասնաշենք, 415 սենյակ**

**Հեռ.` + 374 10 / 52 07 72**

**info@asau.am**

www.asau.am




# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ և ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՎԱՅՀԵՆՇՏԵՖԱՆ-ԹՐԻՍԴՈՐՖ ԿԳ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋև DAAD-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

***„ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ-MBA„***

Գ Ե Ր Մ Ա Ն Ա Լ Ե Զ Ո Ւ   Մ Ի Ջ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ա Կ Ա Ն   Կ Ո Ւ Ր Ս

DAAD
Deutscher Akademischer Austausch Dienst
German Academic Exchange Service

HOCHSCHULE
WEIHENSTEPHAN-TRIESDORF
UNIVERSITY OF APPLIED SCIENCES

*ԻՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ*

*Բազմակողմանի մասնագիտական կրթություն „Master of Business Administration (MBA)„ ակադեմիական աստիճանով*

- *Պրակտիկ ուղվածությամբ կրթություն, որը տալիս է բազմակողմանի մասնագիտական և անձնական հմտություններ և որը դրական է գնահատվում պոտենցիալ գործատուների կողմից*
- *Համացանց 15 երկրներում գտնվող գործընկեր համալսարանների միջև, որոնք միջազգային մագիստրոսական կուրսն են ռաջարկում՝ փոխադարձ ճանաչման համաձայնագրերով*
- *Տեխնիկապես հագեցած կրթական տարածք և մուտք ժամանակակից տեղեկատվական տեխնիկաների և տեխնոլոգիաների տիրույթ*
- *Ինտենսիվ խորհրդատվություն՝ տվյալ երկիր մուտքի արտոնագրի, բնակարանի ապահովման և պրակտիկայի համար*
- *Միջազգային ուսանողների մեծ համայնք (մոտ 17 երկրների)՝ բազմազան նախաձեռնություններով*
- *Աջակցություն կրթաթոշակներ ստանալու հարցում*



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

(ՊՐԱԿՏԻԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿ)

- Գյուղատնտեսական բարձրագույն կրթություն որևէ համալսարանում, Գերմաներենի բավարար գիտելիքներ
- Պրակտիկ ուսումնական կիսամյակն անց է կացվում գյուղատնտեսական ուսումնական տնտեսություններում

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿ

- Պրակտիկ ուսումնական կիսամյակը պետք է լինի արդեն ավարտված (այլ արտադրական պրակտիկաները կարող են գրավոր դիմումի հիման վրա վավեր ճանաչվել)

ՁԵՐ ՈՒՍՈՒՄԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

- Բիզնես մենեջմենթ,

- Արտադրության էկոնոմիկա,

- Ձեռնարկությունների վերլուծություն և վերահսկում,

- Տնտեսագիտական ինֆորմատիկա

- Սոցիոլոգիական հետազոտության էմպիրիկ մեթոդները

- Օտար լեզու (գերմաներեն)

- Մանկավարժական հոգեբանություն

- Ձեռնարկությունների պլանավորում,

- Ագրարային քաղաքականություն,

- Միջազգային ագրարմարքեթինգի կոնցեպտներ

- Գիտության փիլիսոփայություն

- Նախագծերի պլանավորում

- Ձեռնարկությունների խորհրդատվություն

-Մենեջմենթ խորհրդատվություն